

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 38/2

6 օգոստոսի 2013 թ.

Քննարկվեց Ա/Ձ Նեյի Մայիլյանի 26.06.2013 թ-ի դիմում-բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՀՏ 03.06.2013 թ-ի թիվ 2119569 ստուգման ակտի դեմ:

Ա/Ձ Նեյի Մայիլյանի դիմում-բողոքում մասնավորապես նշված է.

2013թ-ի մայիսի 5-ին ժամը 12:00-ի սահմաններում մի հաճախորդ մտավ իմ հարսանյաց սրահ, որին ես շատ լավ գիտեի որպես Էջմիածնի հարկային տեսչության աշխատողի, և պատվիրեց կոնֆետի կոմպոզիցիա 20.000 դրամ արժողությամբ: Նա թողեց 10.000 դրամ կանխավճար, ՀԴՄ կտրոնն այդ պահին խփեցի, բայց նա անջքան շուտ դուրս եկավ, որ ես նույնիսկ չհասցրեցի այն առանձնացնել ՀԴՄ սարքից: Քույրս, որը նաև իմ աշխատակիցն է, դուրս էր եկել ընդմիջման ու երբ վերադարձավ ինձ ասաց, որ մի սև ավտոմեքենա է կանգնած մեր խանութի մոտ: Դա այն ավտոմեքենան էր, որով Ռուդիկը՝ իմ խանութի տարածքային հարկային տեսուչը, վերջերս հաճախ էր այցելության գալիս ինձ սպառնալով, որ եթե ես իր ասած գումարները չվճարեմ նա ինձ կտուգանի: Ես էլ նրան միշտ ասում էի, որ ինչքան առևտուր անեմ, բոլորի ՀԴՄ կտրոնները խփելու եմ և առաջացած հարկը մուծեմ: Ընդ որում գիտեի, որ պետք է մուծեի ապրանքների վաճառքից առաջացած գումարի 3.5%-ը, իսկ հարսանեկան պարագաների վարձույթից առաջացածի՝ 5%-ը: Համադրելով մեքենայի առկայությունը հարկային տեսչության աշխատակցի վազելով դուրս գալու հետ ես վստահ էի, որ նրանք փորձում են ինձ վրա ՀԴՄ-ի խախտման ակտ գրել: Մինչ կանխավճար թողնելը մենք պայմանավորվել էինք, որ ժամը 14:00-ին նա պիտի գար պատվերը տանելու: Ժամը 13:50-ի միջակայքում ես վերջացրեցի աշխատանքս և, քանի որ կանխավճար էի վերցրել ու գիտեի, որ նա հաստատ վերադառնալու է իր պատվերի ետևից ես ևս 10.000 դրամի ՀԴՄ կտրոն խփեցի: Քանի որ կանխավճարը տալուց հետո մինչև երկրորդ այցելությունը ոչ մի հաճախորդ խանութ չէր մտել, ես առանց նախորդից առանձնացնելու խփածու երկու ՀԴՄ կտրոնները կտրեցի ՀԴՄ սարքից և դրեցի կոմպոզիցիայի մեջ: Երբ նա եկավ, կոմպոզիցիան վերցրեց, սակայն ՀԴՄ կտրոնը չէր վերցնում, բայց ես այն դրեցի նրա ձեռքի մեջ: 15 րոպե անց գնորդի հետ եկավ իմ տարածքային տեսուչը՝ Ռուդիկը: Նա հարցրեց, թե ինչքանի առևտուր եմ արել, պատասխանեցի՝ 20.000 դրամի: Նա հարցրեց, թե ինչու 10.000 դրամի եմ ՀԴՄ կտրոն տվել, ասացի, որ տվել եմ 20.000 դրամի կտրոն: Այնուհետև նա նայեց ՀԴՄ կտրոնին և նոր հասկացավ, որ դա երկու կտրոն է իրար կպած: Հետո դողդողալով հանեց օրվա վերջնահաշվարկը (<Z> հաշվետվություն) ու 8.000 դրամի անհասկանալի ՀԴՄ կտրոն խփեց, առանձնացրեց ՀԴՄ սարքից ու սպառնալով, որ հաստատ ինձ տուգանելու է, դարս եկավ հաճախորդի հետ միասին:

Այնուհետև հունիսի 5-ին Արագածոտնի մարզ, գ.Կարբի՝ ծնողներին տան հասցեով նամակ եկավ, որում առկա էր 03.06.2013 թ-ին կազմված թիվ 2119569 ակտը, որով ինձ առաջադրվում էր վճարել տուգանք 150.000 դրամի չափով:

Ակնկալելով Ձեր հանձնաժողովի օբյեկտիվ մոտեցումը, խնդրում եմ չեղյալ համարել ստուգման ակտը, ինչպես նաև ակտում առաջադրված հարկային պարտավորությունը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Նեյի Մայիլյանի և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՀՏ պետի 22.04.2013 թ-ի թիվ 2119569 հանձնարարագրի Ա/Ձ Նեյի Մայիլյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային

մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՀՏ 03.06.2013 թ-ի թիվ 2119569 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է.

Հարկային տեսուչ Սամվել Անտոնյանի կողմից 19.05.2013 թ-ին ք. Էջմիածին, Վազգեն Առաջին 43/51 հասցեում գտնվող Ա/Ձ Նեյլի Մայիլյանին պատկանող խանութում պատվիրվեց շոկոլադե կոնֆետներով կոմպոզիցիա, որի արժեքն էր 18000 դրամ: Պատվիրման պահին՝ ժամը 11:26-ին, կատարվեց 10.000 դրամի կանխավճար, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Ա/Ձ Նեյլի Մայիլյանի կողմից գումարը մուտքագրվեց ՀԴՄ և տրվեց ՀԴՄ կտրոն: Ժամը 14:10-ին վերը նշված կոմպոզիցիան վերցնելուց հետո Ա/Ձ Նեյլի Մայիլյանին վճարվեց նշված ապրանքի մնացած արժեքը՝ 8000 դրամը, որը վերջինիս կողմից չմուտքագրվեց ՀԴՄ և չտրամադրվեց կտրոն: Ժամը 14:17-ին ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև դուրս բերվեց <Z> հաշվետվություն 10.000 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը (8000 դրամը): <Z> հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 8000 դրամը, ժամը 14:17-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 14:17-ին նորից դուրս բերվեց <Z> հաշվետվությունը 8000 դրամ ընդհանուր գումարով:

Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները: Արդյունքում <<Նսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի բ) ենթակետով սահմանված կարգով առաջադրվում է տուգանք 150.000 դրամի չափով:

Սույն բողոքի քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի համաձայն, ՀԴՄ-ի միջոցով հաշվարկներն իրականացնելու համար պատասխանատու անձը պարտավոր է ՀԴՄ-ի միջոցով տպել և գումարն (ներառյալ կանխավճարը) ստանալու պահին ապրանքի հետ միասին գնորդին, պատվիրատուին տրամադրել դրամարկղային չեկ (կտրոն), իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային վարչարարությանն օժանդակության նպատակով վիճակահանության անցկացման ժամանակահատվածում՝ ժապավենի դարձերեսին հատուկ համար պարունակող չեկ (կտրոն):

Տվյալ դեպքում 19.05.2013 թ-ին պատվիրված ապրանքի դիմաց ժամը 11:26-ին կատարվել է 10.000 դրամի կանխավճար, որի գումարը Ա/Ձ Նեյլի Մայիլյանի կողմից մուտքագրվել է ՀԴՄ և տրամադրվել է ՀԴՄ կտրոն: Սակայն, պատվիրված ապրանքը վերցնելուց հետո՝ ժամը 14:10-ին, Ա/Ձ Նեյլի Մայիլյանին վճարված ապրանքի մնացած արժեքը՝ գումարով 8000 դրամ, չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել:

Ա/Ձ Նեյլի Մայիլյանի կողմից ժամը 13:45-ին ՀԴՄ մուտքագրված 10.000 դրամի կտրոնը չի կարող հիմք հանդիսանալ որպես ապրանքը վերցնելու պահին՝ ժամը 14:10-ին, վճարված գումարը ՀԴՄ մուտքագրված լինելու ապացույց, քանի որ 10.000 դրամի կտրոնը տպվել է ժամը 13:45-ին, իսկ ձեռքբերված ապրանքի դիմաց վճարումը կատարվել է ժամը 14:10-ին, այսինքն՝ 25 րոպե հետո: Բացի դա, ապրանքը վերցնելու պահին Ա/Ձ Նեյլի Մայիլյանին փաստացի վճարվել է ոչ թե 10.000 դրամ, այլ՝ 8.000 դրամ:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում իրականացված ստուգմամբ հիմնավորվել է Ա/Ձ Նեյլի Մայիլյանի կողմից ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջների խախտման փաստը, որի համար ստուգման ակտով կիրառվել է <<Նսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պատասխանատվության միջոցը:

Հանձնաժողովի 10.07.2013 թ-ի նիստի քննարկման արդյունքում սույն գործի վերաբերյալ ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը, դիմում-բողոքը և վերջինիս առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ուղարկվել են վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է բացասական եզրակացություն:

Հանձնաժողովը, վերանայելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, ինչպես նաև հաշվի առնելով Գանգատարկման խորհրդի եզրակացությունը գտնում է, որ Ա/Ձ Նելլի Մայիլյանի դիմում-բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<Հարկային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՀՏ 03.06.2013 թ-ի թիվ 2119569 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ



Գ.ՆԵՐՍԻՍՅԱՆ